Հայաստանի Հանրապետություն
«Սարոս-Աուդիտ» ՍՊԸ

THE CENTRE FOR ACCOUNTING SERVICE
SAROS AUDIT

ՀՀ, ք.Երևան,Չարենցի փող. 27ա/16 Tel/Fax. 555 057 Tel: 555 092 E-mail: saros@intarnet.am

«02» մարտի 2006 թ.

Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա թիվ ԱՇN 045
տրված ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ
2004թ, 2005թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների փաթեթի վերաբերյալ

ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ուրբան»ԿԶՀ-ի տնօրեն Ի. Վանյանին, հոգաբարձուների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ուրբան» ԿԶՀ-ն , հաշվապահական հաշվեկշիռը՝ առ 1 հունվարի 2005թ., առ 1-ը հունվարի 2006թ. ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները:

Պատասխանատվությունն այդ հաշվետվությունների համար կրում է «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի ղեկավարությունը: Մենք մեր հերթին պատասխանատվություն ենք կրում այդ հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական ստուգման հիման վրա արվող մեր եզրակացության համար:

Աուդիտը իր մեջ ներառում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք թույլ են տալիս գնահատել հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիությունը:

Մեր կողմից իրականացվող աուդիտը համապատասխանում է աուդիտի համընդհանուր չափանիշներին: Այս չափանիշները պահանջում են, որ մենք պլանավորենք և կատարենք աուդիտն այնպես, որպեսզի հասնենք բավարար աստիճանի համոզվածության, թե կան արդյոք էական անճշտություններ ֆինանսական հաշվետվություններում: Աուդիտը նաև ներառում է հաշվապահական հաշվառման վարման սկզբունքների գնահատումը, ընկերության ֆինանսատնտեսական գործունեության, հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը: Այսպիսով մենք վստահ ենք, որ մեր կողմից իրականացված աուդիտը բավարար հիմք է մեր կարծիքի ձևավորման համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի ֆինանսական վիճակի՝ առ 1-ը հունվարի 2005թ.,առ 1-ը հունվարի 2006թ., ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալի փոփոխությունների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկերը, կազմված են ՀՀ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների և ՀՀ Օրենսդրության պահանջներին համապատասխան:

«ՍԱՐՈՍ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ
Տնօրեն՝ *Կ. Ղոնյան*
Որակավորման վկայական թիվ 179

Աուդիտոր՝ *Գ. Բազրաչյան*
Որակավորման վկայական թիվ 088

ՍԱՐՈՍ-ԱՈՒԴԻՏ ՍՊԸ SAROS-AUDIT 01537868